ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԻՋԱԴԷՊԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Թէեւ անցած Կիրակի Հադրութի շրջանի խառը բնակչութիւն ունեցող Տող գիւղում գինուորականների միջնորդութեամբ հայերի եւ ազերիների միջեւ կնքուել է զինադադարի պայմանագիր ու ստեղծուել՝ «կոնֆլիկտային յանձնաժողով», երկու ազգերի բնակչութեան ներկայացուցիչներից բաղկացած, միջադէպերը շրջանում շարունակւում են։ Հոկտեմբերի 15ին ծանր վիճակում Ստեփանակերտի հիւանդանոց են բերուել 27ամեայ Գարիկ Մարգարեանն ու 27ամեայ Առուստամ Բեջանեանը։ Հողագործական աշխատանքներ կատարելու ժամանակ հայ տրակտորիստների վրայ յարձակուել են մի խումբ ադրբեջանցիներ ու կրակ բացել անզէն մարդկանց վրայ։